

ՓՈԽԱՆՅՈՒՄՆԵՐ ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆՆԵՐԻՅ ԱՆՋԱՆՈՒՆՆԵՐԻՆ

Հայերենի պատմական զարգացման ընթացքում բազմաթիվ հասարակ անուններ փոխանցվել են հատուկ տեսակին՝ գոյական անվան մեջ տարբերակելով անձանունների և տեղանունների շերտեր: Անձանուններին են փոխանցվել մի շարք բուսանուններ, կենդանիների և թռչունների անուններ, բնության երևույթների, քանկարժեք քարերի, երկնային մարմինների անվանումներ և այլն: Իհարկե, այսօր սրանց միջև իմաստային կապ չկա, ուստի հատուկ անունները զուտ պայմանական անվանումներ են, և *Վրեժ, Խաչատուր, Խնկիկ, Շողեր, Մայիս* և այլ հատուկ անուններ միայն ծագումով են առնչվում հասարակ անուններին, ուստի և իմաստային եզրեր չունեն:

Ինչպես առաջինը, հատուկ անուններին են փոխանցվել մի շարք հասարակ անուններ, որոնք փորձել ենք խմբավորել ըստ իմաստային առնչակցության: Այնուհետև յուրաքանչյուր խմբում անձանունները դասակարգել ենք ըստ անվանական սեռի (արական և իգական) և ըստ կազմության (սլարգ, ածանցավոր և բաղադրյալ): Կազմությամբ սլարգ անձանուններում առանձնացրել ենք այնպիսիք, որոնք փոխանցվել են հասարակ գոյականի հոգնակի թվից՝ *եր, -ք* հոգնակիակերտներով:

Այստեղ չենք խոսում բուսանուններից փոխանցված անձանունների մասին, քանի որ դրանց անդրադարձել ենք առանձին հոդվածով¹: Միևնույն ժամանակ յուրաքանչյուր խմբում համապատասխանաբար ներկայացրել ենք անձանուններ, որոնք հայերենը փոխառել է այլ լեզուներից (պարսկերեն, արաբերեն, հունարեն, լատիներեն, եբրայերեն, ռուսերեն և այլն): Անձանունը հասկացություն է, որը չի սահմանափակվում միայն տվյալ լեզվի հասարակ անուններից կատարվող փոխանցումներով: Ի տարբերություն այլ լեզուներից կատարվող փոխառությունների, հասարակ անուն > հատուկ անուն փոխանցումը տեղի է ունենում միայն տվյալ լեզվի սահմաններում: Այսինքն, հայերենը որևէ այլ լեզվից փոխառել է ոչ թե հասարակ անունը, այլ փոխանցել է հատուկին, այլ փոխառել է միանգամից հատուկ անունը՝ հաճախ չանդադադանալով անգամ նրա նշանակությամբ: Օրինակ՝ ոչ մի ծնող, հավանաբար, իր զավակին չէր անվանակոչի *Հակոբ*, եթե գիտենար, որ այն եբրայերեն նշանակում է «խաբեբա» (Jaqob), կամ դատերը չէր անվանի *Շաքե*, քանի որ այն թուրքերեն նշանակում է «ղժբախտ» (Şaki): Ուրեմն հայերենն այլ լեզուներից փոխառել է անձանուններ արդեն իսկ մթագնած նշանակությամբ, և ամեն անգամ, պարզելու համար տվյալ անձանվան իմաստը, լեզուն դիմում է դրա ստուգաբանությանը:

Այժմ անդրադառնա՞նք անձանուններին փոխանցված հասարակ անունների իմաստային խմբերին.

1. *Կենդանիների և թռչունների անուններից հատուկ անուններին փոխանցված բառեր*: Այս խմբում ունենք անձանուններ, որոնք հայերենին են փոխանցվել ազգակից և ոչ ազգակից մի շարք լեզուներից: Ինչպես՝ *Վարագրատ* – իրանական varaz՝ «վարագ» և պահլավերեն dat «պարզև» բառերից, նշանակում է «վարազի պարզև», *Շահեն* – պահլավերեն šahen «բազե» բառն է, *Վշնասպ* – պահլավերեն višnasp՝ «հովստակ» բառն է, *Գուրգեն* – պահլավերեն gurgen՝ «գայլ» բառն է, *Արշակ* – կազմված է պարսկերեն arsa՝ «արջ» և aka փաղաքշական-փոքրացուցիչ բաղադրիչներից և նշանակում է «արջուկ», *Վազգեն* – կազմված է գենդերեն vazg բառից, որ նշանակում է «գորտ» և իրանական en փաղաքշական վերջնաբաղադրիչից, նշանակում է «գորտիկ», *Համամ*–արաբերեն hamam նշանակում է «վալրի աղավնի», *Հովնան* – (Հունան) – եբրայերեն Jona «աղավնի» բառն է, *Լևոն* – հունարեն lewy՝ «առյուծ» բառն է, *Ասլան*–թուրքերեն aslan է՝ «առյուծ» նշանակությամբ և այլն:

¹ Ռ. Ջ ու լ Ֆ ա յ ա ն, Փոխանցումներ բուսանուններից անձանուններին, «Հայոց լեզու և գրականություն», 1, Եր., 2003:

Բուն հայերեն կենդանիների և թռչունների անուններից փոխանցված անձնանունները բաժանել ենք երկու խմբի՝ *ա)* կենդանիների անուններից անձնանուններին փոխանցված հասարակ անուններ և *բ)* թռչունների անուններից անձնանուններին փոխանցված հասարակ անուններ: Իրենց հերթին այս երկու խմբերում առանձնացրել ենք արական անունների և իգական անունների ենթախմբեր:

Կենդանիների անուններից արական անձնանուններին են փոխանցվել հետևյալ հասարակ անունները. *Եզնիկ, Յիկ, Կորյուն, Գառնիկ, Ընձակ* («վագրիկ»): Այս խմբերում ենք դասել նաև *Երամ, Չագիկ և Վարուժան* («արտ թռչուն») անձնանունները, որոնք թեև որևէ կոնկրետ կենդանի չեն նշում, բայց կենդանական աշխարհին վերաբերող ավելի ընդհանուր անվանումներ են: Կենդանիների անուններից իգական անձնանուններին են փոխանցվել *Եղնիկ և Այծեմնիկ* հասարակ գոյականները, ընդ որում, *Այծեմնիկը* հայերեն *այծյամ* գոյականի հնչյունափոխված տարբերակն է և նշանակում է «եղնիկ»: Ինչպես տեսնում ենք՝ կենդանիների անուններից ավելի շատ բառեր են փոխանցվել արական անձնանուններին, քան իգական (արական 7 անվան դիմաց ունենք իգական 2-ը): Պատկերը փոխվում է, երբ անդրադառնում ենք թռչնանուններից կատարված փոխանցումներին: Թռչնանուններից արական անձնանուններին են փոխանցվել *բազե և արծիվ* հասարակ գոյականները: Թռչնանուններից իգական անձնանուններին են փոխանցվել *Սիրամարգ, Կաքավ, Լորիկ, Աղավնի, Արծվիկ, Արտույտ, Դոխիկ, Թռչնակ* գոյականները: Այս ենթախմբում գերակշռում են իգական անձնանունները (9 իգական անվան դիմաց՝ երկու արական): Նշենք, որ *Կաքավը և Լորիկը* հայերենում և՛ իգական և՛ արական անձնանուն են:

Ըստ կազմության այս խմբի անձնանունները լինում են պարզ և ածանցավոր: Բաղադրյալ կազմություններ չեն հանդիպում: Կազմությամբ պարզ են *Կաքավ, Կորյուն, Բազե, Աղավնի, Արտույտ, Երամ, Վարուժան* անձնանունները: Ածանցավոր անձնանունները կազմվում են *կենդանու կամ թռչնի անվանում + -իկ, -ակ փաղաքշական ածանց կադապարով*: Ընդ որում, վերջաձանցն ավելանում է ինչպես անհնչյունափոխ, այնպես էլ հնչյունափոխված հիմքերին: Անհնչյունափոխ հիմքերով են կազմված *Լորիկ, Չագիկ, Դոխիկ, Եզնիկ, Գառնիկ* անձնանունները: Սրանցից *Եզնիկը և Գառնիկը* կազմվել են գրաբարյան -ն վերջնաբաղաձայնի վերականգնումով: *Դոխիկ* իգական անձնանվան արմատը *դոխ-*ն է, որը հայերեն բաբբառներում նշանակում է «աղավնի»: Հնչյունափոխված հիմքերով են կազմված *Ընձակ* - ինձ + ակ (ի- ը հնչյունափոխություն), *Թռչնակ* - թռչուն + ակ (ու-ի սղում), *Արծվիկ* - արծիվ -իկ (ի-ի սղում), *Այծեմնիկ* - Այծյամ + իկ (յա - ե հնչյունափոխություն) անձնանունները:

2. *Բնության և նրա երևույթների անվանումներից հատուկ անուններին փոխանցված բառերն* ինչպես արական, այնպես էլ իգական անուններ են: Արական են *Յոլակ, Հովիկ, Սարիկ, Գետիկ, Լեռնիկ, Շովակ, Շանք, Փայլակ* անձնանունները: Իգական են *Յոլիկ, Շողեր, Շողիկ, Շաղոսկի, Արշալույս, Վերջնալույս, Լեռնուհի, Ճիածան, Հովանուշ, Յոլինե, Շաղիկ, Չյունիկ* անձնանունները: Փոխառյալ անուններն այս խմբում մենք թիվ չեն կազմում, դրանք են՝ *Էթերի*, որ վրացերեն etheri «եթեր» բառն է, *Մարինե*, որ լատիներեն marina «ծովի դուստր» իմաստն ունի, *Մարիգա*, որ լատիներեն նշանակում է «ծով»:

Բնության և նրա երևույթների անվանումներից հատուկ անուններին փոխանցված հայերեն բառերն ըստ կազմության լինում են (պարզ), ածանցավոր, և բաղադրյալ: Կազմությամբ պարզ են *Շանք, Ճիածան, Շողեր* անունները: Սրանցից *Շողեր* իգական անձնանունը ձևավորվել է «շող» հասարակ գոյականի եզրակի թվից՝ (-եր եզրակալկերտով): *Կազմությամբ* ածանցավոր անձնանունները կազմված են *բնության երևույթ/առարկա + -իկ, -ակ, -ուհի փոքրացուցիչ-փաղաքշական վերջաձանց* կադապարով, ինչպես՝ *-իկ -Սարիկ, Գետիկ, Լեռնիկ, Հովիկ, Յոլիկ, Շողիկ, Շաղիկ, Չյունիկ, -ակ -Փայլակ, Յոլակ, Շովակ, -ուհի* վերջաձանցով է կազմված *Լեռնուհի* իգական անունը: *Յոլինե* անձնանունը կազմված է «ցոլ(ք)» հասարակ գոյականով և -ինե իգական վերջնաբաղադրիչով:

Բաղադրյալ անձնանունները կազմված են *գոյական + ա հոլականայ + գոյական կամ բայ* կադապարով, ինչպես՝ *Արշալույս, Վերջնալույս, Շողակաք, Հովանուշ*:

նովորայր իզական անձնանունը կազմված է հայերեն *ծով* և պարսկերեն *nar* «խոր, կրակ» բառերով և նշանակում է «կրակի ծով»:

3. *Երկնային մարմինների անուններից անձնանուններին փոխանցված հասարակ անուններ*. Երկնային մարմինների անվանումներից հայկական անձնանուններին են փոխանցվել երրայերեն, պարսկերեն, հունարեն, լատիներեն անուններ, օր. Սամսոն - երրայերեն *šimšon* «արեգակ» բառն է, Միհրան - պահլավերեն *mihr* «արեգակ» բառն է, Խորեն - կազմված է պարսկերեն *xor* «արև» և *en* փաղաքշական վերջածանցով և նշանակում է «արեգակ», Ստելյա - լատիներեն *Stella* «աստղ» բառից, Միմաս - հունարեն *menas* «լուսին» բառից և այլն:

Բուն հայերեն հասարակ անուն > հատուկ անուն փոխանցման հետևանքով են առաջացել Արև, Արեգ, Արևիկ, Արևհատ, Արեգնագ, Արփենիկ, Արփինե, Սիրարփի, Հրարփի, Հայարփի, Աստղիկ, Լուսին, Լուսինե անձնանունները: Սրանցից կազմությամբ պարզ են Արեգ և Արև անունները, ընդ որում, այս խմբի միակ արական անունն Արեգն է, իսկ մնացյալն իգական անձնանուններ են: Ածանցավոր անձնանունները կազմված են *երկնային մարմնի անվանում* + -իկ փաղաքշական վերջածանցով կամ -ինե, -ենիկ, -ն իգական վերջնաբաղադրիչներով: Այսպես՝ -իկ վերջածանցով են կազմված Արևիկ, Աստղիկ անձնանունները, իսկ -ինե, -ենիկ, -ն վերջնաբաղադրիչով՝ Արփենիկ, Արփինե, Լուսինե անձնանունները:

Քաղաղոյալ կազմություններում առկա է *երկնային մարմնի նշող գոյ. + հասարակ գոյ.* կաղապարը: Այս դեպքում երկնային մարմնի նշող գոյականը կարող է դրվել ինչպես բարդության սկզբում (առաջնաբաղադրիչ), այնպես էլ վերջում (վերջնաբաղադրիչ): Առաջնաբաղադրիչ կազմություններ են՝ Արևհատ - կազմված «արև» և «հատիկ», Արեգնագ - կազմված «արեգ(ակ)» և «նագ(անք)» գոյականներով: Վերջնաբաղադրիչ կազմություններ են՝ Հրարփի - կազմված «հոր» և «արփի» գոյականներով և նշանակում է «հոր արև», Սիրարփի - կազմված «սեր» (ի< է հնչյունափոխությամբ) և «արփի» գոյականներով և նշանակում է «սիրտ արև», Հայարփի - կազմված «հայ» և «արփի» գոյականներով և նշանակում է «հայի արև»:

4. *Թանկարժեք քարերի, մետաղների անուններից անձնանուններին փոխանցված բառեր*. Հայերենն այլ լեզուներից փոխառել է մի խումբ անձնանուններ, որոնք առաջացել են ակնանունների անվանումներից: Օրինակ Փիրուզ, պարսկերեն *piruz*՝ «երկնագույն անգին քար», Ալմաստ, թուրքերեն *almaz*՝ «աղամանդ», Յաղուր, թուրքերեն *yakht*՝ «հուսկինք», «անգին քար», Ջավահիր, արաբերեն *javahir*՝ «գոհար», «թանկագին քար», Չարուհի, Չարինե անձնանունները կազմված են պարսկերեն *zar*՝ «ոսկի» և հայերեն -ուհի, -ինե իգական վերջածանցներով: Ինչպես փոխառյալ, այնպես էլ նախկին ծագում ունեցող բոլոր այն անձնանունները, որոնք փոխանցվել են թանկարժեք քարերի և մետաղների անուններից, միայն իգական են՝ Մարգարիտ, Գոհար, Սաթենիկ, Սաթինե, Ալներ, Ոսկի, Ոսկեհատ, Ոսկեծամ, Շաղուկի:

Ինչպես տեսնում ենք, իգական անձնանվանն են փոխանցվել ոչ միայն թանկարժեք քարի կոնկրետ անվանումներ (Մարգարիտ, Սաթենիկ), այլև՝ հասարակ գոյականներ, որոնք անվանում են թանկարժեք քարի բնդիանուր կերպով (Գոհար, Ալներ): Կազմությամբ պարզ են Մարգարիտ, Գոհար և Ոսկի անձնանունները: Ալներ անունը կազմված է «ակ(ն)» հասարակ գոյականով և -եր հոգնակիակերտով: Կազմությամբ ածանցավոր են Սաթիկ, Սաթենիկ և Սաթինե ձևերը, ուր առկա է «Սաթ» արմատը և -իկ փոքրացուցիչ-փաղաքշական վերջածանցը, կամ -ինե, -ենիկ իգական վերջնաբաղադրիչները: Քաղաղոյալ անձնանունները կազմված են «ոսկի» և որևէ այլ հասարակ գոյականով, որն ավելանում է «ոսկի»- բառին սկզբից կամ վերջից: Երբ «ոսկի» գոյականն առաջաբաղադրիչ է, առկա է ի + ա > ն հնչյունափոխությունը, ինչպես՝ Ոսկեհատ, Ոսկեծամ: Վերջնաբաղադրիչ կազմության դեպքում հնչյունափոխություն չի դիտվում, ինչպես Շաղուկի անվան մեջ:

5. *Վերագական գոյականներից փոխանցված անձնանուններ*. Այս խմբում ևս առկա են փոխառություններ պարսկերենից, հունարենից, արաբերենից, լատիներենից, ռուսերենից: Ինչպես՝ Արզուման - պարսկերեն *arzumand* «կարոտ», Սահակ կամ Իսահակ - երրայերեն *isxaq* «ուրախություն», Սոֆիա - հունարեն *Sofia* «խմաստություն», Եյրաքսիա - հունարեն *Euproxia* «հաջողություն», Ագապի - հունարեն *agapi* «սեր», Թե-

րեզա - հունարեն *teresis* «պաշտպանություն», *Հովհաննես* - հունարեն *Ioannes* «հնազանդություն», *Մուրադ* - արաբերեն *murad* «փափագ, ցանկություն», *Դովլաթ* - արաբերեն *dovlat* «հարստություն», *Վերա* - ռուսերեն *vera* «հավատ», *Նադեժդա* - ռուսերեն *надежда* «հույս», *Լյուբա*, *Լյուբով* - ռուսերեն *любовь* «սեր»:

Հայկական ծագում ունեցող այն անձնանունները, որ ներկայացնում ենք ստորև, խմբավորել ենք ըստ արական և իգական անունների: Արական են *Ավետիս* (*Ավետիք*), *Գուժ*, *Վրեժ*, *Սերո*, *Մխիթար*, *Հուսիկ*, *Չոնիկ*, *Սիրակ* անձնանունները: Իգական են *Օփսաննա*, *Շնորհիկ*, *Երագիկ*, *Բերկրուհի*, *Վշտուհի*, *Սիրանուշ* անձնանունները:

Կազմությամբ պարզ են *Գուժ*, *Վրեժ*, *Սերո*, *Մխիթար*, *Օփսաննա* անձնանունները: *Ավետիս* արական անձնանունն ունի երկվեցվորում՝ գործածվում է նաև *Ավետիք* ձևով: *Մխիթար* արական անունը առաջացել է «մխիթարություն» վերացական գոյականի -ություն վերջածանցի կրճատմամբ: *Օփսաննա* (*Օսաննա*), *Օսան* իգական անձնանունը ծագել է եբրայերեն «ովսաննա» «օրհներգություն» գոյականից: *Սերո* անվան հիմքում «սեր» հասարակ գոյականն է՝ *ս* վերջնաձայնավորի հավելումով: Ածանցավոր կազմություններն ունեն *վերացական գոյական + -իկ*, *-ուհի վերջածանց* կաղապարը: Ինչպես՝ *Երագիկ*, *Հուսիկ*, *Չոնիկ*, *Շնորհիկ*, *Շնորուհի*, *Բերկրուհի*, *Վշտուհի*: *Բերկրուհի* իգական անձնանունը կազմված է «բերկրանք» գոյականի -անք վերջածանցի անկումով և -ուհի իգական վերջածանցի հավելումով: *Վշտուհի* անձնանվան մեջ առկա է յ< ք հնչյունափոխությունը: *Սիրանուշ* իգական անձնանունը կազմված է «սեր» գոյականով (ե>ի հնչյունափոխությամբ) և -անու(յ)շ իգական վերջածանցով: Հասարակ անուններից անձնանուններին փոխանցված բառերի այս խմբում բաղադրյալ կազմություններ չկան:

6. *Պատվանուններից, պաշտոնանուններից, զինվորական կոչումների անվանումներից անձնանուններին* կատարված փոխանցումներում քիչ չեն փոխառյալ անունները: Օրինակ՝ *Ռեգինա* - լատիներեն *Regina* «թագուհի», *Վասիլ* - հունարեն *Vasil* «թագավոր», *Բասիլ* - հունարեն *Basileus* «թագավոր», *Լույսնբար* - պարսկերեն *kalantar* «տաճարտեր», *Շամիր* - կազմված է պարսկերեն *šah* «թագավոր» և արաբերեն *amir* «իշխան» բառերից, *Միրաթ* - կազմված է պարսկերեն *mir* «իշխան» և ահ փոքրացուցիչ փաղաքշական ածանցով և նշանակում է «իշխանիկ», *Մարգպան* - պահլավերեն *marzpan* «մարզպան, կուսակալ», *Շասյուհ* - պահլավերեն *šahpühr* «արքայորդի», *Մելիք* - արաբերեն *melik* «արքա», *Խարուն* - թուրքերեն *khataun* «թագուհի»:

Այս խմբին պատկանող իսյերեն հասարակ անուններից անձնանուններին են փոխանցվել ոչ մեծ թվով բառեր: Դրանցից արական սեռի են՝ *Իշխան*, *Ոստանիկ*, *Մսպուհ*, *Հայրապետ*, *Չորապետ*, *Տոնապետ*, *Չորավար* անձնանունները: Իգական են *Թագուհի* և *Դշխ* կամ *Դշխուհի* անձնանունները: Կազմությամբ պարզ են *Դշխ*, *Իշխան*, *Սևպուհ* անունները: Ածանցավոր անձնանունները կազմված են *հասարակ անուն + -իկ փոքրացուցիչ-փաղաքշական* և *-Չուհի իգական վերջածանց* կաղապարով: Ինչպես՝ *Թագուհի*, *Դշխուհի*, *Ոստանիկ*: Բաղադրյալ անձնանուններում առկա է *հասարակ գոյական + ա հոդակապ + պետ*, *վար բաղադրիչ* կազմությունը: Ինչպես՝ *Հայրապետ*, *Տոնապետ*, *Չորապետ*, *Չորավար*:

7. *Անձնանուններ, որոնք փոխանցվել են ազգակցական կապեր նշող գոյականից*. Այս խմբում փոխառյալ են *Բաբիկ* և *Բաբկեն* արական անունները, որ կազմված են պարսկերեն *bab* «հայր» բառով և *en* փաղաքշական վերջածանցով: Ազգակցական կապեր նշող իսյերեն բառերից անձնանուններին փոխանցված գոյականները կազմությամբ ածանցավոր են և կազմվում են -իկ, -ուհի վերջածանցներով: Արական են *Հայրիկ*, *Թոռնիկ*, *Պասիկ*, *Չարմիկ* անունները: Իգական են *Դստրիկ*, *Չարմուհի*, *Մամիկ* անունները: Վերջինս կազմված է հայերեն «մայր» արմատով և -իկ վերջածանցով:

8. *Անձնանուններ, որոնք հատուկ անվան են փոխանցվել կրոնական տոնանուններից, ծեսերից, հավատալիքներից*, ինչպես՝ *Գալուստ*, *Խոստիկ*, *Չատիկ* *Համբարձում*, *Հարություն*: Այս խմբի բոլոր անուններն արական են: Մրանցից *Գալուստը* «հոգեգալուստ» գոյականի կրճատ ձևն է, որ կազմված է «գալ» բայով և -ուստ գոյականակերտ վերջածանցով: *Խոստիկը* կազմվել է խոստում գոյականից -իկ վերջածանցի միջոցով և նշանակում է «խոստման, լուստի գավակ»: *Չատիկը* կրոնական գալուստիկ տոնանունից է: *Համբարձումը* կազմված է -ում, իսկ *Հարությունը* -ություն գոյա-

կանակերտ վերջածանցներով: Ինչպես տեսնում ենք, բացառությամբ *Չատիկ* անվան, որ կազմությամբ պարզ է, այս խմբի մնացած անձնանուններն ածանցավոր են:

9. *Անձ նշող այլ կարգի հասարակ գոյականներից փոխանցված անուններ*: Նախ անդրադառնանք այլ լեզուներից փոխառնված այն անձնանուններին, որոնք անձ են նշում. *Կիրա* իգական անունը հայերենը փոխառել է հունարենից (*kupia*), նշանակում է «տիրուհի», *Արսեն* - փոխառություն է հունարենից (*arsen*), նշանակում է «այր, տղամարդ», *Նոննա* - լատիներեն *nonna*՝ «միանձնուհի», *Մարթա* - ասորերեն *marta* «տիրուհի», *Սեդա* - արաբերեն *seyda*՝ «տիրուհի», *Դիտրիկ* - իրանական *daxt*՝ «աղջիկ», *Լորենտ* - ֆրանսերեն *lorette*՝ «երիտասարդ կին», *Ադասի* - բուրբերեն *agasi*՝ «իր տղան», *Էդար* - քաթարերեն *el* «ժողովուրդ» և *dar* «պահող»՝ «ժողովրդին պահող», *Նահապետ* - պարսկական *nata* «ցեղ, ազգ» և *pat* «պետ»՝ «ցեղապետ»:

Բուն հայերեն անձ նշող հասարակ գոյականները, փոխանցվելով հատուկներին, կազմել են հիմնականում արական անձնանուններ, ինչպես՝ *Ծերուն, Տերուն, Պարետ, Մարգար, Սկրտիչ, Ռազմիկ, Մարտիկ, Ազնավուր, Ժիրայր, Տիրայր, Նորայր, Չարմայր, Հրայր, Տիրատուր*: Իգական է միայն *Տիրուհի* անձնանունը: Այս անձնանուններից կազմությամբ պարզ են *Պարետ, Ծերուն, Մարգար* անունները: *Ծերուն* անունը կազմվել է հայերեն «ծերունի» հասարակ գոյականից ի վերջնահնչյունի անկումով: *Մարգար* անունը հայերեն «մարգարե» հասարակ գոյականն է -ե վերջնահնչյունի անկումով և նշանակում է «հեռատես»: Ածանցավոր են *Տիրուհի, Սկրտիչ, Ռազմիկ, Մարտիկ* կազմությունները՝ -ուհի, -իչ և -իկ վերջածանցների առկայությամբ:

Բաղադրյալ անձնանունները կազմվում են *գոյական + գոյական* կամ *ածական + գոյական բաղադրիչներով*: *Գոյական + գոյական* բաղադրիչներով են կազմված. *Տիրայր* անձնանունը, որի առաջին՝ «տեր» բաղադրիչը հնչյունափոխված է տեր > տիր (>ի), *Հրայր* անունը, որի առաջին՝ «հուր» արմատը հնչյունափոխվել է հուր>իր (ու>ը) և նշանակում է «հրե տղամարդ»: *Ածական + գոյական* բաղադրիչներով են կազմված. *Չարմայր* անունը, ուր «գարմ»-ը հայերեն «գարմանալի» բառն է և նշանակում է «գարմանալի այր», *Նորայր* անունը, որ կազմված է «նոր» ածականից և «այր» գոյականից: *Ժիրայր* անունը, որ կազմված է «ժիր» ածականից և «այր» գոյականից: *Գոյական + բայ* բաղադրիչներով է կազմված *Տիրատուր* անունը, որ կազմված է «տեր» և «տուր» բառերից և նշանակում է «տիրոջ տված», *Ազնավուր* արական անունն ըստ Աճառյանի կազմված է «ազն» արմատից, որ նշանակում է «ազգ, ցեղ» և վրացերեն «ավուր» վերջնաբաղադրիչից և ունի «դյուցազն» իմաստը:

10. *Իրանիչ գոյականներից փոխանցված անձնանուններ*. Նման փոխանցումները հատուկ են նաև այլ լեզուներին: Հայերենը հունարենից, պարսկերենից, եբրայերենից և այլ լեզուներից փոխառել է մի շարք անուններ, որոնք տվյալ լեզուներում *հասարակ անուն > հատուկ անուն* փոխանցման արդյունք են: Այսպես՝ *Պետրոս* - հունարեն *petros*՝ «քար», *Ստեփան* - հունարեն *Stepanos*՝ «պսակ», *Վահրամ* - պահլավերեն *vahram*՝ «զարում», *Եփա* - եբրայերեն *xavā*՝ «կյանք», *Մագդա* - եբրայերեն *magdala*՝ «աշտարակ», *Բահիշ* - պարսկերեն *bakhšīš*՝ «նվեր, ընծա», *Սեյրան* - արաբերեն՝ *seyran* «գրեմանք», *Սիմա* - արաբերեն «դեմք, երես», *Թինաթին* - վրացերեն «լուսի ցուր»:

Այս խմբի մեջ մտնող բուն հայերեն հասարակ անուններն իրենց քանակով գերազանցում են մյուս խմբերի բառերին: Նախ ներկայացնենք իրանիչ հասարակ գոյականներից անձնանուններին փոխանցվածներն ըստ տեսակների: Արական են *Սիրադեղ, Պարույր, Թաթիկ, Թաթույ, Խաչիկ, Խաչեր, Խաչատուր, Խաչերես, Շաքար, Ընծա, Պարզև, Նվեր, Հուսիկ, Նշան, Գյուտ, Գիսակ, Շանթ, Վահան, Հրահատ, Հրաչյա, Յուլակ անունները*: Իգական են *Քնարիկ, Շնորհիկ, Հուրիկ, Նազիկ, Երազիկ, Խաչանուշ, Օդեր, Մանան, Մանիկ, Լուսիկ, Լուսածին, Լուսաբեր, Լուսերես, Լուսվարդ, Լուսեր, Լուսնբազ, Յուդաբեր, Նշանուհի, Վարսենիկ, Վարսինե, Բյուրեղ, Հովանուշ, Հրաչուհի, Նազենիկ, Սիրվարդ* անունները:

Անդրադառնանք վերոնիշյալ անձնանունների կազմությանը: Պարզ են *Շաքար, Ընծա, Նվեր, Պարզև, Նշան, Պարույր, Շանթ, Վահան, Գյուտ, Բյուրեղ, Մանան* անձնանունները: *Մանան* իգական անձնանունը ծագել է «մանանա, գազպեն» հասարակ գոյականից ա վերջնահնչյունի անկումով:

Ելքենմն հաստուկ անվան են փոխանցվում մաև հասարակ գոյականի հոգնակի բովոլ դրված ձևերը: Ընդ որում, անձնանուններ կարող են դառնալ ինչպես հոգնակի բովոլ գործածվող հասարակ գոյականները, օրինակ՝ *հաչեր, Օղեր, Յողեր*, այնպես էլ հոգնակիի այնպիսի կազմություններ, որոնք գործածական են միայն հատուկ անվան սահմաններում, ինչպես, օրինակ՝ *Լուսեր* իզական անունը, որ կազմված է «լուս» (ույ>ու) հնչյունափոխված ձևով և -եր հոգնակիակերտով:

Ածանցավոր անձնանունները կազմվում են իր ցույց տվող հասարակ գոյականով և -իկ, -ակ փոքրացուցիչ-փաղաքշական կամ -ուհի, -ինե, -ենիկ, -անու(յ)՝ իզական վերջածանցներով: -Իկ ածանցով են կազմված *Զնարիկ, Շնորհիկ, Հուրիկ, Նազիկ, Երազիկ, Լուսիկ, Վարսիկ, Մանիկ* իզական և *Թաթիկ, Հուսիկ, Չոնիկ* արական անունները: -Ակ վերջածանցով են կազմված *Յուլակ, Գիսակ, Սիրակ*, արական անձնանունները: *Գիսակ և Սիրակ* անուններում առկա է ե>-ի հնչյունափոխությունը: -Անու(յ)՝ վերջածանցով են կազմված *Հրանուշ, Խաչանուշ, Հովանուշ* անունները: -Ենիկ վերջածանցով՝ *Վարսենիկ, Նազենիկ*, -ինե վերջածանցով՝ *Վարսինե*, -ուլ փաղաքշականով՝ *Թաթուլ* արական անունը: Կազմությամբ բաղադրյալ հատուկ անունները կարող ենք խմբավորել ըստ առկա բաղադրիչ հասարակ գոյականի: Այսպես՝ *Լույս* հասարակ գոյականով կազմված իզական անձնանուններ, որոնցում կատարվել է ույ>ու հնչյունափոխություն (լույս> լուս): *Գոյական + բայ* կաղապարով են կազմված *Լուսածին, Լուսաբեր* անունները: *Գոյական + գոյական* կաղապարով են կազմված *Լուսավարդ, Լուսերես, Լուսնբազ* անունները:

«Ոսկի» հասարակ գոյականով կազմված անուններում «ոսկի» բառը կարող է լինել բարդության բե՛ առաջին, և թե՛ վերջին բաղադրիչը: Երբ այն բարդության սկզբում է, առկա է ի > ե հնչյունափոխությունը: Օրինակ՝ *Ոսկեհատ, Ոսկեծամ*: Բարդության վերջում «ոսկի» բառը մնում է անփոփոխ, ինչպես՝ *Շաղուսկի, Ծամուսկի*: «Հուր» հասարակ գոյականով կազմված հատուկ անուններում դիտվում է ու > ր (հուր > հրը) հնչյունափոխությունը, ինչպես՝ *Հրաշ, Հրահատ, Հրածին*: «Մեր» բաղադրիչով և որևէ այլ հասարակ գոյականով են կազմված *Սիրարփի, Սիրաղեղ, Սիրվարդ* անձնանունները, որ «սեր» գոյականի է ձայնավորը հնչյունափոխվել է ի - ի: *Յուղաբեր* բաղադրյալ անունը կազմված է «յուղ» գոյականով և «բեր» բայով և նշանակում է «յուղ բերող»:

11. *Տեղանուններից անձնանուններին կատարված փոխանցումներ*. Անձնանունների առաջացման իմնական աղբյուրը, ինչպես տեսանք, հասարակ անունն է: Սակայն կան մի շարք տեղանուններ՝ քաղաքների, գյուղերի, գետերի անվանումներ, որոնք, փոխանցվելով հատուկ անվան մի խմբից (տեղանուններից) մյուսին (անձնանուններին), դարձել են արական կամ իզական անուններ: Այս դեպքում գործ ունենք ոչ միայն ներխուսքիմասային, այլև բառիմաստային միևնույն խմբի՝ հատուկ անվան ներսում կատարվող փոխանցման հետ: Նման փոխանցումները ներկայացնենք ըստ արական և իզական անունների:

Տեղանուններից արական անձնանուններին են փոխանցվել *Շիրսուգ* - Պարսկաստանի Տիրազ քաղաքի անունից, *Շիրակ* - Շիրակի դաշտավարի անվանումից, *Միս, Վան* - քաղաքների անուններից, *Եղվարդ* - գյուղանունից, *Մրարատ, Մրազած* - լեռների անուններից, *Սևան* - լճի անվանումից, *Վարսագ* - լեռան և Վարագա վանքի անվանումներից, *Վիրապ* - Խոր Վիրապ վանքի անունից, *Տառն* - գավառի անունից և այլն:

Իզական անձնանուններին փոխանցվել են *Մրաքսի* / Մրաքսյա / Մրաքս - կազմվել է գետի անունից -ի, -յա իզական վերջածանցների հավելումով, *Վանուհի* - կազմվել է Վան քաղաքի անունով և - ուհի վերջածանցով, *Տաթիկ* - Տաթև վանքի անունով և -իկ փաղաքշական վերջածանցով, *Կարինե* - Կարին քաղաքի անունով և -ե իզական վերջնաբաղադրիչով:

Այսպիսով, քննելով հասարակ անուն > անձնանուն փոխանցումները, կարելի է եզրակացնել. ա) Հասարակ անուններից անձնանուններին փոխանցված գոյականները կարող ենք խմբավորել ըստ իմաստային առանձնահատկությունների: բ) Հասարակ անուններից փոխանցված անձնանունները թե՛ արական, և թե՛ իզական անուններ են: գ) Անձնանուններ են դարձել ինչպես բուն հայկական, այնպես էլ շատ փոխառյալ հասարակ անուններ: դ) Ըստ կազմության հայերենի անձնանունները լինում են պարզ,

բարդ և անանցափոր: Ե) Կան անձնանուններ, որոնք ծագել են հատուկ անվան մեկ այլ տեսակից տեղանունից:

ПЕРЕХОДЫ ИЗ НАРИЦАТЕЛЬНЫХ К СОБСТВЕННЫМ ИМЕНАМ

Резюме

Р. Джулфаян

В статье рассматриваются переходы нарицательных имен к собственным в армянском языке. Констатируется, что: а) существительные, переходящие из нарицательных к собственным именам можно сгруппировать по смысловым признакам; б) имена, переходящие из нарицательных к собственным, являются как женскими, так и мужскими; в) собственными стали как исконно армянские, так и многие заимствованные нарицательные имена; г) по составу собственные имена в армянском языке бывают простыми, сложными и производными; д) многие собственные имена возникли от топонимов.